ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՈՒՍ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՍԵՎԱՆԻ Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ N3
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2-3
ՄԱՍ 1	4-8
ՄԱՍ 2	9-13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	14-17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	18

Ներածություն

«Գրականությունը հայելի չէ լոկ, և եթե հայելի էլ ասենք, ապա շատ տարօրինակ և կախարդական հայելի է նա: Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին և ձգտում է կյանքում ստեղծել մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որը կազմված ու հյուսված է բնության ամենամաքուր տարրերից»:

Հովհ. Թումանյան

Գրականությունը դաստիարակում է սովորողի զգացմունքային ու մտավոր աշխարհը, պատմական զարգացման բոլոր ժամանակների մեջ ճանաչելի է դարձնում կյանքը և մարդուն:

Ըստ Հանրակրթական պետական չափորոշչի «Գրականություն» առարկան սովորողը սկսում է ուսումնասիրել 7-րդ դասարանից: Նրանք պետք է անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերեն տվյալ գրողի կյանքի ու գործունեության, նրա դավանած գրական ուղղության վերաբերյալ, պատկերացում ունենան գրականագիտական հասկացությունների մասին: Սովորողը պետք է կարողանա լեզվով, ոճով ու նյութով զանազանել գրողներին:

Գրական ճաշակը ձևավորվում է գրականության ու գրողի մասին ստացած բավարար իմացություններով ու գիտելիքներով և, ամենակարևորը, գրական նյութերի ընթերցանությամբ:

Ելնելով մեր ժամանակաշրջանի մարտահրավերներից՝ պետք է ձևավորել կարողունակություններ, որոնք հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներն են:

Սովորողներին կյանքին նախապատրաստելու համար ոչ միայն պետք է տալ որոշակի գիտելիքներ, զարգացնել հմտություններ, սովորեցնել սովորել ինքնուրույն և մյուսների հետ համատեղ աշխատել կյանքի տարբեր իրավիճակներում, ձևավորել սեր հայրենիքի նկատմամբ, արժևորել մարդու կյանքն ու արժանապատվությունը, սեփական ինքնությունը, կարևորել սեփական քաղաքացիական պարտքը, զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր, նյութական ժառանգությունը ու մշակութային բազմազանությունը՝ ճանաչելով հայ և

համաշխարհային գրականությունն ու արվեստը, ձևավորել մշակութային գրագիտություն ու ճաշակ:

Այս ամենը կյանքի կկոչվի այն դեպքում, երբ սովորողները կարողանան ինքնուրույն վերլուծել գեղարվեստական գործը և ցույց տալ իրենց վերաբերմունքը: Այս դեպքում արդեն օգտագործելով արվեստի հուզական կողմը՝ ուսուցիչը նրանց մեջ զարգացնում է գեղեցիկի զգացումն այնպես, որ հենց իրենք՝ սովորողները, ցանկանան ու ձգտեն ստեղծել գեղեցիկը հասարակական կյանքում, քանի որ գեղեցիկի զգացումը պատկերավոր խոսքի ու լավ արարքի նախապայմաններից մեկն է:

Խնդրի հաջող լուծումը հնարավոր է միջառարկայական կապերի ամրապնդման միջոցով՝ հայոց լեզվի, երաժշտության, նկարչության, պատմության, աշխարհագրության, կենսաբանության, ՏՀՏ հետ:

Մաս 1

Գրականության և արվեստի հասարակական կարևոր նշանակությունն այն է, որ դրանք օգնում են դաստիարակելու հոգևոր բազմակողմանի հետաքրքրություններ ունեցող մարդու, ում մոտ հավասարապես զարգացած են և միտքը, և զգացմունքը, որն ընդունակ է արձագանքելու գեղեցիկին, մերժելու տգեղն ու բացասականը:

Գրականության և կերպարվեստի առնչության մեջ սովորողը տեսնում է նկարի գաղափարական բովանդակությունը, սովորում է երևույթները դիտել գունային և պլաստիկ կառուցվածքով:

Գրականության, կինոյի ու թատրոնի կապի միջոցով աշակերտները ծանոթանում են հասարակական զարգացման փոխակերպումներին, մարդկանց հայացքներին, հասարակության ներքին կառուցվածքին, որոնք սովորողների մեջ ստեղծում են ճանաչողական ձգտում:

Բարձր գեղարվեստականությամբ կինոնկարը կամ ներկայացումը խորը ապրումներ է առաջացնում մարդու մեջ՝ սովորեցնելով նրան սիրել լավը, գեղեցիկը և ատել կեղծիքը, մշակութային արժեքների ոչնչացումը, հավատարմության ոտնահարումը, հայրենիքին դավաճանելը և այլն:

Գրականությունը խոսքի արվեստ է և որպես արվեստի տեսակ անմիջականորեն կապված է նրա այլ տեսակների հետ՝ երաժշտության, գեղանկարչության: Գրականության շատ դասեր անհնար է անցկացնել առանց երաժշտության ունկնդրման կամ գեղանկարիչների կտավների կրկնօրինակների ցուցադրմամբ:

Դասն ավելի կհարստանա, եթե գրական նյութի բացատրման, մեկնաբանման ընթացքում նշվի նաև, որ այդ ստեղծագործության հիման վրա գրվել են նաև երաժշտական գործեր: Դեռ հնագույն ժամանակներից խոսքն ու երգը, բառն ու հնչյունը հարազատ են եղել հային ու ապրել նրա հոգում: Թե ուրախ և թե տխուր պահերին նրա շուրթերին ալիքվել են երգի հնչյունները: Երգի ու բանաստեղծության յուրօրինակ համատեղում են կատարել գուսանները, որոնց արվեստում համադրվել են երգը, պարը, խոսքը, շարժումը: Դարերով ամրապնդված այս ոգին է գուցե շատ հաճախ հայ երաժիշտներին մղել դեպի հարուստ հայ գրականությունը՝ այնտեղից նյութ քաղելու:

Դիտարկենք դասերի մի քանի օրինակներ:

Գրիգոր Նարեկացու տաղերն անցնելիս ընդհանուր ներածական խոսքից հետո լսում ենք «Տիրամայր» տաղը՝ նախօրոք աշակերտներին առաջարկելով երաժշտությունն ունկնդրելուց հետո իրենց ընկալածի չափով ներկայացնել կնոջ՝ Տիրամոր կերպարը: Աշակերտների մեծ մասն ընդգծում է, որ հնագույն այդ մեղեդու մեջ ամենից առաջ արտահայտվել է հայ կնոջ վեհությունը, նրա կերպարի եթերայնությունը, խորհրդավոր գեղեցկությունը:

Այնուհետև ընթերցում ենք «Մեղեդի ծննդյան» տաղի գրաբարյան տարբերակը, որպեսզի աշակերտները հասկանան, որ Նարեկացու տաղերի մեղեդայնության այն վեհությունը, հյութեղությունը, գունագեղությունը բխում են բանաստեղծի լեզվից, նրա նուրբ բառօգտագործումից ու բառաշինությունից: Ապա ցուցադրում են Լեոնարդո դա Վինչիի կամ Ռաֆայելի պատկերած տիրամայրերի նկարներից՝ «Մոնա Լիզա», «Սիքստինյան տիրամայրը», «Սուրբ ընտանիքը», «Տիրամայրը հրեշտակներով»՝ նպատակ ունենալով ամբողջացնելու միջնադարի մեծագույն տառապյալի պատկերած կնոջ դիմանկարը: Ինչ խոսք՝ աշակերտները դեռ չեն կարողանում հասկանալ Նարեկացու առաջադրած գաղափարների ու արվեստի բարդությունը, բայց կարևորն այն է, որ նրանք հուզական ակտի միջոցով համոզվում են նրա մեծության, անկրկնելիության, նորարարության մեջ:

Ներսես Շնորհալու շարականները, Նահապետ Քուչակի հայրենները անցնելիս օգտագործում ենք դրանց հիման վրա գրված երգերի, ինչպես նաև այդ դարերի պանդխտության մոտիվներով գրված «Կռունկ» երգի ձայնագրությունը: Առիթն օգտագործում ենք նշելու, որ միջնադարյան հայկական երգերի անզուգական կատարող է Լուսինե Զաքարյանը: Նրա մասին տեղեկատվական պատառիկներ հաղորդելով՝ նպատակ ունենք նաև հայրենասիրություն դաստիարակել նրանց հոգում: Աշխարհի բազմասփյուռ հայերին երգի լեզվով նա հաղորդակից է դարձնում և հայի անցած տառապանքներին, և ներկայի ուրախությանն ու աշխատանքի հոգնությանը:

Գրական որոշ սեղծագործություններ էլ անցնելիս նշում ենք, որ դրանց հիման վրա գրվել է այս կամ այն երաժշտական գործը, օրինակ՝ Կ. Զաքարյանի «Աղասի» օպերան՝ ըստ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի», Խոջա Իգնաթյանի «Նամուս» օպերան՝ ըստ Շիրվանզադեի, Վ. Արարատյանի «Հարճը» օպերան՝ ըստ Դ. Վարուժանի «Հարճը» պոեմի, Ա. Բաբանի «Բաղդասար Աղբար» օպերան՝

ըստ Հ. Պարոնյանի «Բաղդասար Աղբարի», Ստ. Զրբաշյանի «Գիքորը» օպերան՝ ըստ Հ. Թումանյանի «Գիքորը» պատմվածքի և այլ օպերաներ:

Հովհ. Թումանյան թեման անցնելիս նշում ենք, որ մեր գրողներից ամենից շատ է կապված երաժշտությանը: Երաժշտականացրել են նրա «Անուշը», «Թմկաբերդի առումը», «Լոռեցի Սաքոն», «Ախթամարը», «Չարի վերջը», «Շունն ու կատուն», «Մի կաթիլ մեղրը»: Շատ են երաժշտականացվել նաև Ա. Իսահակյանի բանաստեղծությունները՝ «Ոսկան ախպեր», «Էսօր ձեր տուն», «Սիրեցի յարս տարան» և այլն: Հիրավի զարմանալին է, որ եվրոպական երկրներում շրջած, նրանց կենցաղը տեսած և արվեստը սեփականը դարձրած հայ բանաստեղծն այնքան խորը արմատներ ուներ իր հողում, որ ինչպես ինքն էր ասում. «Պարթենոնին նայելով՝ Գառնին է հիշել, Մանբլանի գագաթին կանգնած՝ Արագածն է միտքը բերել»:

Դ. Դեմիրճյանի կենսագրությունն անցնելիս կանգ ենք առնում նրա՝ երաժշտական կրթություն ստացած լինելու հանգամանքի վրա, որ թե Ռուսաստանում, թե արտասահմանում, հատկապես՝ Ժնևում, նա ջութակի հիմնավոր դասեր է առել, պատմում ենք դիպվածներ նրա երաժշտական կյանքից, ջութակի նկատմամբ ունեցած սիրուց:

Մեծ քնարերգուների՝ Ե. Չարենց, Վ. Տերյան, Պ. Սևակ, Հ. Սահյան, Ս. Կապուտիկյան և այլոց գրվածքներին անդրադառնալիս տեղին է դասաժամի ընթացքում ունկնդրել ժամանակակից երաժշտական խմբի՝ PROJECT LA-ի կատարումները: Նրանք վերոնշյալ և այլ հեղինակների պոեզիան համեմել են յուրօրինակ երաժշտությամբ ու ներկայացնում են պրոֆեսիոնալ գործիքավորմամբ:

Գրականությունը մեծ աղերսներ ունի նաև գեղանկարչության և քանդակագործության հետ: Արվեստի այս տեսակների նմուշների ցուցադրումը ավելի շոշափելի է դարձնում այն, ինչ արտահայտվում է գրականության մեջ խոսքի միջոցով:

«Սասունցի Դավիթ» էպոսն անցնելիս ցուցադրում ենք գրքի նկարազարդումները՝ արված Հակոբ Կոջոյանի կողմից: Սասունցի Դավթի կերպարի էպիկականությունն ավելի է ընդգծվում հատկապես Երվանդ Քոչարի քանդակով, որը տեղադրված է Երևանի երկաթուղային կայարանում:

Գեղարվեստական գրականության մեջ պատկերվում է ոչ միայն մարդկային կյանքը, այլև նկարագրվում են բնությունը, նրա տարբեր երևույթներն

ու տեսարանները, բուսական ու կենդանական աշխարհը: Բնությունն անձնավորվելով՝ ասես մասնակից է դառնում կերպարների գործունեությանը կամ դառնում է նրա խոհերի ու ապրումների բացահայտման յուրօրինակ աղբյուր: Նրանց տրամադրությունների արտահայտման միջոցով բնությունը ապրում ու շնչում է կերպարների ճակատագրով: Մյուս կողմից հայրենի լեռնաշխարհի գեղեցկությունները, նրա բարձրաբերձ լեռները, անդնդախոր ձորերը, փրփրաբաշ գետերը, բերքառատ դաշտերը նկարագրելով՝ գրողն ընթերցողի մեջ սեր է առաջացնում այն ամենի նկատմամբ, ինչը երբեմն դառնում է հայրենիքի խորհրդանիշ: Այս առումով բնության գեղեցկությունը կապվում է նաև պատմական ու ազգային պատկերացումների հետ՝ արթնացնելով հայրենասիրական զգացումներ:

Ամեն անգամ, երբ հարկ է լինում «Գրականություն» առարկայի դասերին անդրադառնալ պատմությանը կամ աշխարհագրությանը, հարկ ենք համարում առիթն օգտագործել ստուգելու աշակերտների բնագիտական գիտելիքները, ստուգելու, թե ինչ գիտեն նրանք իրենց հայրենի բնության, նրա հրաշալիքների, բարիքների մասին, ինչ վերաբերմունք ունեն դրանց նկատմամբ: Այսօր մարդն անընդհատ հպարտանում է բնության մեջ կատարած իր փոփոխություններով, բայց չպիտի մոռանանք, որ ինչքան էլ ձևափոխենք բնությունը, այն՝ իր բնականությամբ, մնում է բոլոր բարիքների մայրը: Մարդը երբեք չպիտի հպարտանա, որ իրեն է ենթարկել բնությունը, քանի որ բնության նկատմամբ ունեցած ամեն մի հաղթանակի հետևանքով թանկ է վճարում:

Պետք է սիրել տալ բնությունը, որովհետև սերը դեպի հարազատ թուփը, ծառը, ծաղիկը, թռչունները, անտառն ու գետը ի վերջո ձևավորում են հայրենասիրության զգացումը:

Գրականության դասագրքերում բազմաթիվ նյութեր կան, որոնց նկատմամբ բնության նկատմամբ սիրո դաստիարակումն է: Դաստիարակչական այս պրոցեսի ընթացքում էլ գրականությունը կապվում է բնագիտական առարկաների հետ:

Հայաստանի բնությունը գեղեցիկ է ոչ միայն իր անդնդախոր ձորերով, կուսական անտառներով, ծառերով ու ծաղիկներով, այլ նաև կենդանիներով: Նա, ով սիրում է և հոգ է տանում կենդանական աշխարհի նկատմամբ, չի կարող անտարբեր լինել դեպի մարդը: Այս հիմնական և ընդհանուր գաղափարն ենք դնում այն բոլոր դասերի հիմքում, երբ ուսումնասիրում ենք կենդանիներին վերաբերող գրական նյութեր:

Հայրենի բնության անբաժանելի մասն ու մասունքն են դարձել պատմական հուշարձանները, որոնք սփռված են մեր լեռնաշխարհում: Միջառարկայական կապը «կգործի» հաճախակի կազմակերպված էքսկուրսիաների միջոցով՝ դեպի այդ վայրերը՝ դրանց վեհությունը մի պահ զգալու, հայրենի բնությանն ավելի սերտ կապվելու և գիտակցորեն սիրելու, պահպանելու համար:

ՄԱՍ 2

Հայ գրականությունը բոլոր առարկաներից թերևս ամենից շատ կապված է «Պատմություն» առարկային, չէ որ գրականությունը ևս պատմություն է, գրական մշակույթի պատմություն, որտեղ ինչպես Արիստոտելն է նշել ի տարբերություն պատմության տրվում է ոչ միայն եղածը, այլև՝ հնարավորը, ցանկալին: Պատմությանն առնչվելը հատկապես օրգանական անհրաժեշտություն է դառնում, երբ ուսուցանում ենք պատմական թեմաներով ստեղծագործություններ: Մինչև աշակերտը լավ չիմանա գրական գործի պատմական ատաղձը, չի կարող գնահատել ստեղծագործությունը, խոսել գրողի՝ դեպքերի ու դեմքերի գնահատման ինքնուրույնության և ճշմարտացիության մասին:

Խոսելով պատմության մեծ դերի մասին՝ Մ. Գորկին գրել է. «Որքան լավ ճանաչենք անցյալը, այնքան հեշտ և խորը կհասկանանք ներկայի նշանակությունը»:

Պատմության և գրականության միջառարկայական կապը կարելի է ստեղծել տարբեր նյութերի ուսումնասիրության ժամանակ, օրինակ՝ ներկայացնել դարաշրջանը տվյալ ժամանակաշրջանի պատմավեպի հետ համատեղ: Պատմավեպի ուսուցման ժամանակ ուսուցիչը պետք է աշակերտին բացատրի գրական ստեղծագործության հիմքում ընկած պատմական ժամանակաշրջանը, Հայաստանի քաղաքական վիճակը, պատմական միջավայրի առանձնահատկությունները: Ապա նշել պատմական այն սկզբնաղբյուրները, որոնցից օգտվել է հեղինակը, մեկնաբանի, որ գրողը չպետք է դառնա սոսկ պատմական փաստերի պատճենահանողը:

Պատմական փոքրիկ փաստը գրականության դասին կարող է դառնալ ավելի խորը պատկերային միջավայր, որտեղ հերոսների ներաշխարհը, հույզերը, հոգեբանական բարդ անցումները ավելի խորությամբ են բացատրում հերոսի պատմական նկարագիրը, աշխարհայացքը, նրա արժեհամակարգը: Երկու առարկաների կապը հաստատելու համար գործածվում են հանգուցային բառեր և բառակապակցություններ. պատմականի և ներկայի համաժամանակյա քննություն, պատմական հիշողություն, պատմականի և գեղարվեստականի խաչաձևում, պատմականի գեղարվեստական արժևորում:

Կենսագրական նյութը ներկայացնելով՝ ուսուցիչը խնամքով ընտրում է պատմական, կենսագրական և գրական փաստերը, որոնք կարելի է առանձնացնել գրողի և դարաշրջանի միջև կապ հաստատելու, նրա տեղը իր ժամանակի գրական և գաղափարական պայքարում բացահայտելու համար:

Նյութի ընտրության վերաբերյալ աշխատանքը, որը կօգնի կապել պատմությունը գրականության հետ, կարելի է իրականացնել հետևյալ երեք ուղղություններով.

1. դարաշրջանի պատմական փաստաթղթերի, նամակների, օրագրերի, ժամանակակիցների հուշերի, այդ ժամանակաշրջանի լրագրության ուսումնասիրություն
2. ծանոթություն գրողի կենսագրական փաստերին, երկրի հանրային կյանքին նրա անմիջական մասնակցության մասին պատկերացում
3. գրողի կողմից արդիական հարցերի բարձրացում:

Հայ դասականների գործերի մեծ մասը պատմության արտացոլումն է: Նրանք տարբեր կերպ են վերաբերվել պատմության հարցերին: Հայ գրականության բնութագրական առանձնահատկություններից մեկը նրա ներկայացուցիչների աննկուն հետաքրքրությունն է իր ժողովրդի, երկրի, պատմական անցյալի նկատմամբ՝ սերտորեն կապված ողջ մարդկության պատմական ճակատագրին: Այն հստակ և վառ դրսևորվում է հայ գրողներին բնորոշ այնպիսի որակներով, ինչպիսին է քաղաքացիական գիտակցությունը: Անհնար է ճիշտ արտացոլել մարդկանց կյանքը, զգացմունքներն ու մտքերը՝ չիմանալով անցած պատմական ուղին, չգիտակցելով այն ամենը, ինչով նրանք ապրել են, ինչն է դարեր շարունակ գոհացրել ու վիշտ պատճառել նրանց: Պատմական անցյալի անդրադարձը և քաղաքացիական պարտքի կատարում է, և ազգային ինքնագիտակցության դրսևորում:

Գրականությունը, համագործակցելով պատմության և հասարակագիտության հետ, սովորողին հնարավորություն կտա ներկայացնելու մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, դիմակայելու ճնշումներին, ցուցաբերելու հանդուրժողականություն, ապրումակցում և մարդասիրություն:

Դիտարկենք Դ. Վարուժանի՝ 8-րդ դասարանում ուսումնասիրվող «Ձոն» բանաստեղծությունը՝ կիրառելով միջառարկայական կապ պատմության և

աշխարհագրության հետ ու ներառարկայական կապ հայ հին շրջանի գրականության հետ:

- Կենսագրական տեղեկություններ, պատմական ակնարկ. 1915թ., Կոստանդնուպոլիս: Աշխարհագրական քարտեզի վրա ցուցադրել այն բոլոր վայրերը, որոնք առնչվում են Դ. Վարուժանի կենսագրության հետ:
- Էկրանի կամ պաստառի վրա ցուցադրել ջրային եղեգ բույսը, եթե հնարավոր է բնական ցույց տալ, ապա ցուցադրել եղեգնյա գրիչը, որով Մ. Խորենացին երկնել է «Հայոց պատմությունը»: «Ձոնը» իր հերթին ևս մի հայոց պատմություն է: Եղեգնյա բառը նաև «Վահագնի ծնունդը» առասպելի հետ է կապվում, քանի որ Վահագնը ծնվեց եղեգան փողից: Ահա այդ եղեգան փողը եղեգնյա գրիչն է Վարուժանի ձեռքին, որով կերտում է մեր նոր պատմությունը:

Հայ գրականությունը համաշխարհային գրականության մի փոքր մասն է, ուստի նրա զարգացումը պիտի դիտարկել այդ ընդհանուրի սահմաններում: Որպեսզի այս ճշմարտությունն աշակերտը լավ հասկանա, անհրաժեշտ ենք համարում զուգահեռներ անցկացնել հայ և արտասահմանյան, հայ և ռուս գրականությունների միջև՝ կիրառելով աշակերտների ռուսերենի, անգլերենի և գերմաներենի դասերին ստացած գիտելիքները: Իհարկե այս առարկաների հետ անմիջական կապը զգալի է արտադասարանական ընթերցանության ժամերին, երբ հանձնարարվում է ռուս կամ արտասահմանյան որևէ գրողի ստեղծագործություն:

Միջառարկայական կապերի ապահովումը առավել ցայտուն է դրսևորվում հայոց լեզվի և գրականության ուսուցման ընթացքում: Այն ենթադրում է հետևյալը. մի կողմից լեզվի դասերին լեզվական երևույթները, հասկացությունները բացատրելու համար օգտվել անցած գրական երկերի ընձեռած հնարավորություններից, լեզվական նյութը բացատրել աշակերտին արդեն ծանոթ գրական երկերի օրինակներով, մյուս կողմից գրականության դասերին անհրաժեշտության դեպքում հատուկ ուշադրություն դարձնել լեզվական այն հարցերին, որոնք աշակերտն արդեն սովորել կամ սովորում է լեզվի դասերին: Լեզվի և գրականության միջառարկայական կապն ունի երկկողմանի բնույթ՝ լեզու-գրականություն և գրականություն-լեզու:

Գրականության դասերից անբաժան պետք է լինի հատկապես ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը: Հայտնի է, որ լեզվի դպրոցական դասագրքում թվարկված են ուղղագրական ու ուղղախոսական կանոնները և դրանց վերաբերյալ բառերի համապատասխան ցանկեր: Հայտնի է նաև, որ աշակերտները դասը պատասխանելիս կամ բառերն առանձին թվարկելիս սովորաբար ճիշտ են արտասանում, սակայն կապակցված խոսքում, այլ բառերի հարևանությամբ թույլ են տալիս բազմաթիվ սխալներ, ճիշտ չեն արտասանում: Ճիշտ կլինի գեղարվեստական երկն անցնելիս ուսուցիչը պահանջի դուրս գրել ուղղագրական դժվարություն ունեցող բառերը, սովորել դրանք գործածել նախադասության մեջ, ապա աչքի ընկնող չափով կպակասեն ուղղագրական սխալները:

Ընթերցանության ժամանակ, հատկապես չափածո երկերի, լուրջ ուշադրություն պետք է դարձնել լեզվից սովորած այնպիսի մի նյութի, ինչպիսին հայերենի շեշտն է:

Գրականության դասերին սերտորեն պետք է անցնել բառագիտությունը, պարզապես բառագիտության ուսուցումն անհնար է արդյունավետ կազմակերպել առանց գրականության դասերի: Այստեղ է, որ աշակերտը պետք է սովորի բառի իմաստը, բազմիմաստությունը, ուղղակի և փոխաբերական իմաստը, նորարարություններն ու հնաբանությունները, սովորի տարբերակել գրական ու բարբառային բառերը, դարձվածքները, զգա հոմանիշների արտահայտչական արժեքը: Գրականության դասերին ուսուցիչը պետք է բավարարվի ոչ միայն բառի իմաստը տվյալ գործածության մեջ բացատրելով, այլև անդրադառնա այլ իմաստների, տարբեր իմաստներով գործածել տա նախադասության մեջ: Միայն այդ կերպ է հնարավոր հարստացնել բառապաշարը, անծանոթ բառերը դարձնել աշակերտի սեփականությունը, բառերին կենդանություն տալ:

Չպետք է մտածել, թե լեզվի և գրականության միջառարկայական կապի ապահովումը նշանակում է գրականության դասի վերածում լեզվի դասի: Ո՛չ, գրականության դասն ունի իր խնդիրները, լեզվի դասն ունի իրենը:

Լեզվի ժամերին բարդ նախադասություն անցնելիս շատ տեղին է գրական տեքստերից առանձնացնել, բերել օրինակներ, պարզել նրանց կառուցվածքը, կապակցության միջոցները, բարդ նախադասության կապի մեջ մտնող նախադասությունների կապն ու փոխհարաբերությունը: Նպատակահարմար է

տնային աշխատանքներն էլ հանձնարարել գեղարվեստական գրականությունից կամ գրականության դասագրքից:

Առանց գրական տեքստի, առանց գրականության դասերի դժվար կլինի ուսուցանել ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակիի կամ հակառակը: Դժվար է նաև ուսուցանել հայերենի կետադրությունը: Արտահայտիչ ընթերցանության, արտասանության, ուղղախոսության համար անհրաժեշտ է կետադրական կանոնների իմացություն:

Վերջում պետք է նշել, որ լեզվի բոլոր բաժինների ուսուցման ժամանակ հենվում ենք գրական օրինակների, նախադասությունների վրա և գրականության նյութն ուսումնասիրելիս օգտվում ենք լեզվական կանոնների ամբողջությունից: Մի խոսքով այս առարկաներն անբաժանելի են և ճիշտ է, որ դասավանդում է նույն ուսուցիչը:

Եզրակացություն

Սխալ է այն պատկերացումը, որի համաձայն գիտության և տեխնիկայի աննախադեպ առաջադիմության պարագայում գրականության և արվեստի դերն իբրև թե նսեմանում է, որ «ֆիզիկոսների» կողքին «լիրիկները» չեն կարողանում զբաղեցնել մարդկանց հետաքրքրությունները: Ահա թե ինչ է ասել Էյզենշտեյնը. «Ինձ բարձրագույն երջանկություն են տալիս արվեստի ստեղծագործությունները, նրանցից ես այնպիսի հոգևոր երջանկություն եմ քաղում, որպիսին չեմ քաղում ոչմի ուրիշ բնագավառից»:

Արդի ժամանակաժրջանում կարևոր նշանակություն է ստանում առարկաների գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում անպայման տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Յ. Ա. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում միջառարկայական կապերի մասին նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը աշակերտներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը: «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել փոխկապակցվածության մեջ»:

Միջառարկայական կապն ապահովելիս մենք սովորողի մոտ ձևավորում ենք համակարգային և ինտեգրված մտածողություն, արժևորում ենք մարդու կյանքն ու արժանապատվությունը:

Միջառարկայական և ներառարկայական կապերը գրականության դասերը դարձնում են ավելի հետաքրքիր: Դասավանդման այսպիսի տեխնիկան նպաստում է սովորողների տարբեր հմտությունների, կարողությունների ընդլայնմանն ու ուսուցման արդյունավետության բարձրացմանը, զարգացնում

տարաբնույթ մտածողություն և ճիշտ գործելու, սովորելու, վերլուծելու ունակություններ:

Ուսուցչի մասնագիտական պատրաստվածության և ուսուցման ժամանակակից մեթոդների իմացությամբ ու դրանք միշտ կիրառելու հմտությամբ է պայմանավորված ոչ միայն աշակերտի կրթվածության ցուցանիշը, այլև նրա արժեհամակարգի ձևավորումը և մարդկայնի դրական որակների ձեռքբերումը: Ուսուցման մեթոդները, ձևերն ու տեսակները հնարավորություն են տալիս ապահովելու ուսաուցչի առջև դրված այս խնդիրները, ուստի վերջինս պետք է քաջատեղյակ լիի ուսուցման ժամանակակից մեթոդների և կարողանա դրանք ճիշտ ու տեղին կիրառել:

Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը նոր դիտարկումներ է ներկայացնում: Ինտեգրված ծրագիրը ուսումնականտարբեր բնագավառների միջև կապեր է ստեղծում: Ինտեգրումն իր բնույթով զարգացնող է. այն ներառում է թե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին, թե ավելի խելացիներին: Ունի ոչ միայն զարգացնող, այլ դաստիարակող նշանակություն: Ինտեգրման շնորհիվ աշխատանքը հետաքրքիր է դառնում բոլորի համար, որովհետև այն ընթանում է բոլոր մասնակիցների ներառմամբ: Միջառարկայական մոտեցման դեպքում ուսումնասիրվող թեման դառնում է դասավանդման առանցքը, որին տարբեր առարկաներ մատուցում են իրենց արդյունքները: Երկրորդական է դառնում ուսումնասիրվող թեմաների տարանջատումը:

Ինտեգրված ուսումնական ծրագիրը տարբեր առարկաների և բնագավառների միջև կապեր է հաստատում այն պարագայում, երբ ընդունվում է փոխկապակցվածության փաստը:

Միջառարկայական և ներառարկայական կապերն իրենց ծագումով հին են այնքան, որքան դասավանդումը: Այս կապերի մասին իրենց աշխատություններում գրել են դասական մանկավարժության ականավոր դեմքերը: Ժամանակակից մանկավարժությունը ևս պահանջում է բոլոր առարկաների դասավանդման ընթացքում լայնորեն կիրառել միջառարկայական և ներառարկայական կապերը: Պատճառը հետևյալն է՝ իր ստացած գիտելիքներն աշակերտը որոշ ժամանակ անց նույն մանրամասներով չի հիշում, այլ մտապահում է միայն գլխավորը, էականը, կարևորը: Եթե այդ կարևորը

շաղկապված չէ այլ առարկայական գիտելիքների հետ, ապա անիմաստ կլինի խոսել դա մտապահելու մասին:

Ըստ Հանրակրթության պետական չափորոշչի՝ սովորողը պետք է ուսումնառության ընթացքում ձևավորի կարողունակություններ՝ լեզվական գրագիտության: Որպեսզի աշակերտը կարողանա գրավոր և բանավոր հաղորդակցվել մայրենի լեզվով, ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել ու մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր ու կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական թվային և ձայնային նյութեր, կարևորում ենք գրականության դերը և արժևորում միջառարկայական կապերը:

Գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում: Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ մայրենի լեզուն՝ որպես ՀՀ պետական լեզու, անկախ պետականության պահպանման, զարգացման կարևորագույն երաշխիքն է, որն անփոխարինելի դեր ունի ինչպես հենց իր՝ սովորողի, այնպես էլ ողջ հայ ժողովրդի կյանքում: Մայրենի լեզվի, գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեհամակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթներն ու սովորույթները: Ազգային ոգին և մշակույթն արժևորելու, գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակում է հայրենասեր, պետական մտածողության ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում: Գրական երկն ուսումնասիրելիս սովորողը հնարավորություն է ունենում հասկանալու և վերլուծելու տեքստի ենթիմաստը, հեղինակի ասելիքը, գրողի տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները, պատկերավոր խոսքի գեղագիտությունը: Գրական տեքստի համաողմանի ուսումնասիրության ընթացքում զարգանում է սովորողի դատողական և պատկերավոր մտածողությունը՝ վերլուծելու, համադրելու, ընդհանրացնելու, եզրահանգումներ անելու կարողությունը: Գրականություն ուսումնասիրելու նպատակը նաև սովորողին հայերեն խոսքի գեղագիտությանը,

խոսքի արվեստին հաղորդակից դարձնելն է: Գրական կերպարների արարքների, դրդապատճառների բնավորության վերլուծությունը, նրանց հոգեբանության մեջ թափանցելու ունակությունը սովորողին հնարավորություն են տալիս հասկանալու, ճանաչելու ոչ միայն իր շուրջը գտնվող մարդկանց, այլ նաև ինքն իրեն: Գրական երկերից քաղած դասերի շնորհիվ սովորողը կարողանում է կյանքում հարաբերություններ հաստատել, ճիշտ հաղորդակցվել ու համագործակցել մարդկանց հետ, համատեղ աշխատել, ստեղծել նյութական և հոգևոր արժեքներ՝ հանուն հայրենի պետության, հանրության բարօրության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մ. ԱԲԵՂՅԱՆ, ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 1961

Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, ԱՇԱԿԵՐՏԻ ԽՈՍՔԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ, ԵՐԵՎԱՆ, 1973

Ռ. ԱԹԱՅԱՆ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԵՐԵՎԱՆ, 1974

Թ. ՁՈՒՀԱՐՅԱՆ, ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ, ԵՐԵՎԱՆ, 1972

Ե. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 2004